# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

## ՈՐՈՇՈՒՄ
## <<20>>դեկտեմբերի 2017 թվական թիվ 23

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի հատկանիշով և << Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի համաձայն ավագանին որոշում է

1. Սահմանել 2018թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների/ներառյալ՝ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման //բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/թույլտվությոան համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000դրամ,

բ/սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեսոց շենք շինությունների համար՝30000դրամ,

- 500-ից մինչև1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ 70000դրամ:

-1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 1000000դրամ:

Գ. ոչ հիմնական շինությունների համար՝

-մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների ի համար՝ 3000դրամ,

- 20և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա/ չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000դրամ.

բ/ բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսված է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այկ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամաբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4.համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար 2018 թվականի համար հարյուր հիսուն հազար դրամ:

5.համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի ,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 2018 թվականի համար վաթսուն հազար դրամ:

6.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

Ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝տաս հազար դրամ.

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար դրամ:

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում է տասնչորս հազար դրամ:

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներկու հազար դրամ.

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ երեսուն հազար դրամ:

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ հիսուն հազար դրամ.

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝տաս հազար դրամ

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ տասներկու հազար դրամ

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝տասնչորս հազար դրամ:

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ.

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերոս ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ երեսուն հազար դրամ.

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազամակերպման դեպքում ՝ հիսուն հազար դրամ

7. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350դրամ մեկ քառակուսի մետրի համար :
բ/ Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ
:
8.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զնարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24$^{00}$ –ից հետո աշխատելու թույլտվության համար `2018 թվականի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000դրամ
բ/ բաղնիքների/սաունաների/ համար՝ 200000դրամ
գ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ
դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ
ե/շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 10000դրամ
9.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է՝
ա/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20ծավալային տոկոս արտադրանք զովազդող արտաքին զովազդի համար՝ 1000դրամ,
բ/ թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20ծավալային տոկոս արտադրանք զովազդող արտաքին զովազդի համար՝ 2500դրամ,
դ/ այլ արտաքին զովազդի համար՝ 1000դրամ
դ/ դատարկ զովազդային վահանակների համար՝ 700դրամ
10.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանվում է՝ 2000դրամ:
11.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվությանհամար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝10000դրամ:
12.Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը ՀՀ սահմանված ցանկում գյուղական համայնքում 0,5 գործակցի կիրառմամբ:
13.համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների փոխհատուցման վճարը սահմանել չորս հազար դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1.Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝
ա/ Համայնքի տարածքում շինարարություն կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ` 3000 դրամ :
բ/ տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ` 3000 դրամ :
գ/ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներ վճար ` 3000 դրամ :

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0
Հ.Աբրահամյան

Ս.Խուդոյան

Գ.Գրիգորյան

Կ. Մարտիրոսյան

Լ.Նադարյան

Վ.Ղազարյան

Պ.Ադամյան

Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Գ. Սուրենավան, հեռ. 055-53-53-54
էլ. Փոստ surenavan.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## <<20>> դեկտեմբերի 2017 թվականի N 24

### ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Լ. Նաղարյան

Վ. Ղազարյան

Կ. Գրիգորյան

Ս. Խուդոյան

Համայնքի ղեկավար Կ. Կարապետյան

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 24 որոշման

# ԿԱՐԳ
# ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ

## I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կարգով /այսուհետ՝ կարգ/ կարգավորվում են համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման հետ կապված հարաբերությունները:

2.Աղբահանության վճարի հաշվարկման և գանձման համար հիմք է հանդիսանում <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին համայնքի ավագանու որոշումը:

3.Սույն կարգով չեն կարգավորվում <<Աղբահանության և սանիտարակամ մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

## II.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

4.Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5.Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցամատյանում գրանցելու միջոցով:

6.Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետը:

## III.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

7.Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1/բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար փաստացի բնակվող անձերի քանակով,

2/այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

8.Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու /պարզելու/ անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1/առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար 20 դրամ /1քառ. մ/,

2/արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար 4 դրամ /1քառ. մ/

3/կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար 2 դրամ /1 քառ. մ/:

9. Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով /դիմումով/ կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման /չափերի, քմ.-ի/ տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

## IV.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳԱՆՁՈՒՄԸ

10.Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետը /այսուհետ՝ գանձող/:

11.Գանձողը ստանում է համայնքապետարանի կողմից տրամասրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը:

12.Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը /այսուհետ՝ համակարգող/ իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

13.Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

14.Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված գանձողը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների /հաշվետվություն/ վերաբերյալ:

## V.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

15.Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

## VI.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.Աղբահանության վճար վճարողների գրանցամատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

## ՈՐՈՇՈՒՄ
## <<20>>դեկտեմբերի 2017 թվական թիվ 25

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ,<<ՎԱՐԴ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ –Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջով ավագանին որոշում է

Հաստատել 2018 թվականի համար Սուրենավան համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝համաձայն հավելված 1-ի և <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի <<ՎԱՐԴ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը `համաձայն հավելված 2-ի:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Ա.Մուսախանյան

Ս.Խուդոյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան

Հավելված 1
Սուրենավան համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 25 որոշման

ՍՈՒՐԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 17

2.Աշխատողների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 դրույք | 230.0 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 դրույք | 120.0 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 դրույք | 172.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 դրույք | 171.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 դրույք | 125.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 դրույք | 110.0 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 դրույք | 100.0 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Գործավար | 1 դրույք | 78.0 |
| Օպերատոր | 1 դրույք | 100.0 |
| Հավաքարար | 1 դրույք | 78.0 |
| Վարորդ | 1 դրույք | 73.0 |
| Պահակ | 1 դրույք | 78.0 |
| Մշակույթի տուն | | |
| Տնօրեն | 1 դրույք | 100. |
| Գեղմասվար | 1 դրույք | 95.0 |
| Գրադարանավար | 1 դրույք | 80.0 |
| Հարկահավաք | 1 դրույք | 90.0 |
| Հավաքարար | 1 դրույք | 73.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 2
Սուրենավան համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 25 որոշման

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՔԻ <<ՎԱՐԴ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 14

2.Աշխատողների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| Տնօրեն | 1 դրույք | 180.0 |
| Դաստիարակ | 1 դրույք | 93.0 |
| Դաստիարակ | 1 դրույք | 93.0 |
| Դաստիարակ | 1 դրույք | 93.0 |
| Դաստիարակ | 0.75 դրույք | 72.8 |
| Հաշվապահ | 0.75 դրույք | 100.0 |
| Դայակ | 1.1 դրույք | 72.8 |
| Դայակ | 1.1 դրույք | 72.8 |
| Դայակ | 1.1 դրույք | 72.8 |
| Խոհարար | 1 դրույք | 72.8 |
| Խոհարարի օգնական, դռնապահ | 1 դրույք | 72.8 |
| Դաշնակահար | 0.75 դրույք | 93.0 |
| Տնտեսվար-լվացքարար | 1.25 դրույք | 93.0 |
| Պահակ | 1 դրույք | 72.8 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՊԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

## ՈՐՈՇՈՒՄ
## <<20>>դեկտեմբերի 2017 թվական թիվ 26

## ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով ավագանին որոշում է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և մրցույթի կարգով վարձակալությամբ տրամադրելու :

Վեղու Ներքին Արփայի գոտուց.

1.Լոտ ծածկագիր 03-086-0008-0001-ից 1,1969 հա արտադրական
2.Լոտ ծածկագիր 03-086-001-ից 0,4265 հա բնակավայրի կորիզավոր
3. Լոտ ծածկագիր 03-086-0001-0001-ից 0,2 հա գյուղ,նշանակության վարելահող
4.Լոտ ծածկագիր 03-086-101-001 23,6106 հա արոտավայր
5.Լոտ ծածկագիր 03-086-101-003 11,3156 հա արոտավայր
6.Լոտ ծածկագիր 03-086-102-001 –ից 3,6303 արոտավայր
7.Լոտ ծածկագիր 03-086-0152-0203-ից 0,0917 ջրային տարածք
Ընդհամենը-40,471 հա

2.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի մեկնարկային վարձավճարը սահմանել հողամասի զուտ եկամտի 22տոկոսի չափով:

3.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա առավելագույնը 20 հա:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Ա.Մուսախանյան Ս.Խուդոյան

Գ.Գրիգորյան Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

**Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

## ՈՐՈՇՈՒՄ
## <<20>>դեկտեմբերի 2017 թվական թիվ 27

## ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԱՆԱՍՆԱԳՈՄԵՐԸ ԻՐԵՆՑ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջով ավագանին որոշում է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը և անասնագոմերը իրենց սպասարկող տարածքներով առանձնացնելու և աճուրդ վաճառքի կարգով օտարելու :

Վեղու Ներքին Արփայի գոտուց.

1.Լոտ ծածկագիր 03-086-0805-0003 , 0,006 հա գյուղ. այլ հողատեսք

2.Լոտ ծածկագիր 03-086-0015-0010 , 0,08199 հա գյուղ. արտադրական

3. Լոտ ծածկագիր 03-086-0001-0010, 0,0837 հա ,որից 0,0791 հա բնակավայրի կորիզավոր,0,0046 հա վարելահող

4.Լոտ ծածկագիր 03-086-0805-0004,0,002 հա բնակավայրի այլ հող

5.Լոտ ծածկագիր 03-086-0028-0105, 0,03057 հա բնակավայրի հաս.կառուցապատման հող

6.Լոտ ծածկագիր 03-086-0024-0035 , 0,0084 հա բնակավայրի հաս.կառուցապատման

7.Լոտ ծածկագիր 03-086-0015-0001-ից 0,2957 հա արտադրական

8.Լոտ ծածկագիր03-086-0268-0007,0,2423 հա գյուղ.արտադրական

Ընդհամենը-0,75066 հա

2.Օտարվող հողամասերի աճուրդ վաճառքի մեկնարկային գինը սահմանել հողամասերի կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

3. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով օտարվող հողամասի մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա առավելագույնը 20 հա:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նադարյան Ս.Խուդոյան

Գ.Գրիգորյան Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան Վ. Ղազարյան

**Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան**